

ճակը, ինչպէս նկարագրուած է այս տեղ. որովհետեւ վրաց
էկզարխութեան վտանգը անցած է, և «Հօրիզոն»ում կար-
դում ենք որ «Վրաստանի էկզարխ է նշանակուած Տամբովի
արքեպիսկոպոս Ինոկինոգիոսը, որ յայտնի է իւր անցեալ
գործունէութեամբ իրքի մարդասէր և վերին աստիճանի
կորրեկտ եկեղեցական, այս նշանակումը համարութիւն
է զարթեցրել բարձր եկեղեցական շրջաններում»: Ինու-
կենդիս արքեպիսկոպոսը 47 տարեկան է:

— Հ Հ Հ —

ՕՐԹՈԴՈՔԾ ԵԿԵՂ. ԱՐՏՈՒՐԱՀՄԱՆՈՒՄ

Թուրքիայի ծածուկ բրիստոնեաները կամ ստարիօտները: Յռնի
մահմեդականացումն: Քրիստոնեաների զինւորագրութիւնն: Անտիոքի պատ-
րիարքի թուղթը իւր բազմացեղ հօտին սիրոյ եւ հաշտ ապրելու համար:
Յունաստանում եկեղեցական դանձարան հաստատուելը: Յունական թա-
դաւորութեան բնակիչները բատ լեզուի եւ կրօնի:

(Պերք. Եկտ.)

Յոյն հասարակութիւնն ու լրագրութիւնը նորից
վրդովուած են թուրքիայի գաղտնի քրիստոնեաների ծանր
վիճակի առիթով: Հիմք ունենալով խզճի աղատութիւնը,
որը սահմանադրութեան հետ հրատարակուեց Թուրքիա-
յում, և. Պօլոյ յոյն պատրիարք Յովակիմ Գ.-ը դիմեց
կառավարութեանը խնդրելով թոյլ տալ ստարիօտներին,
որ իրաւունք ունենան ազատ գաւանել քրիստոնէական
հաւատը: Փոքր-Ասիայի Քալդի (Խաղտիք), Տրապիզոնի և
Բոդոպօլի թեմերում ստարիօտներ անունով քրիստոնեա-
ներ կան, որոնք ԺԶ. դարում մահմետական մոլեռան-
դութեան ազդցութեան և տաճիկ իշխանութեան ճնշման
տակ ստիպուած եղան ընդունել մահմետականութիւն:
Բայց, պաշտօնապէս մահմետական համարուելով հանդերձ,
ստարիօտները շարունակեցին քրիստոնեայ մնալ: ունէին
իրանց քահանաները, գիշերները, կամ Աղ—դաղ սարերում,
կատարուած ծածուկ ժամերգութիւններին ներկայ էին լի-
նում: մահմետական անուան հետ քրիստոնեայ անուններ
էին կրում, պսակները, մկրտութիւնները, և թաղումները

կատարում էին քրիստոնէական արարողութեամբ. և այս բոլորը մահմետականներից, տաճիկ պաշտօնեաներից գաղտնի. Այսպէս գործը երկու դար շարունակուեց. Եղել են ժամանակներ, երբ մոլեռանդ թուրքերը թափանցել են քրիստոնեանների գաղտնիքին և վրէժխնդրութեամբ հալածել են. Այժմ էլ գաղտնի քրիստոնեանները, մօտ 30 հազար են հաշում, իսկ առաջ աւելի շատ էին. Ումանք չը կարողացան դիմանալ հաւատի համար ծանր մաքառումներին բոլորովին մահմետականութիւն ընդունեցին. Քրիստոնեանների մեծագոյն մասը հաւատարիմ մնաց ուղղափառութեան և կրում է իւր տառապանքն ու զրկանքը անընդհատ մինչեւ մեր ժամանակը. ԺԹ. գարում, երբ Թուրքիայում սկսուեցին կարգերի փոփոխութիւնները, նրանց գրութիւնն աւելի և՛ ծանրացաւ. 1839 թ. թուրքաց Արդուլ Մէջիտը հրատարակեց Գիւլիսանէի Խատահնէրիֆը, որով Թուրքիայում խղճի ազատութիւն յայտարարուեց. Յենուելով պետական այս ակտին ստաւրիունները իրանց յայտարարեցին քրիստոնեայ. յայտնեցին աշխարհին իրանց կրած ողբալի վիճակը և խնդրեցին թուրքաց կառավարութիւնից իրանց քրիստոնեայ ճանաչել, և տալ իրանց այն բոլոր արտօնութիւնները, որ հոռոմները վայելում են. Բայց խղճի ազատութեան փոխարէն, որին ձգտում էին քրիստոնեանները, թուրքաց կառավարութեան կողմից նրանց գէմ նոր հալածանք սկսուեց. Թուրք կառավարութիւնը չէր կամենում նրանց քրիստոնեայ ճանաչել. պահանջում էին, որ նրանք ընդունեն իսլամը, և մուսուլմանների հետ զինւոր գնան, և պետութեան վերաբերութեամբ իրանց պարտքը կատարեն որպէս մահմետական և ոչ որպէս քրիստոնեայ. Փոքր-Ասիայում նորից լսուեցին քրիստոնեանների հեծեծանքի և ողքի ձայնները, ոչ յօժարակամ, որպէս առաջ էր, այլ թուրք կառավարութեան բռնութեամբ. Բայց ահա, 1856 թուին Թուրքիայում հրատարակուեց յայտնի Խատահնէրիմայունը, որով նորից հաստատում էր քրիստոնեանների խղճի ազատութիւնը. Սակայն ստաւրիունների դրու-

թիւնը սրանից յետոյ էլ չը բարւոքուեց, ինչպէս և չը փոխուեց այն ժամանակ էլ, երբ հաստարակուեց թուրքաց առաջին սահմանադրութիւնը 1876 թուրին։ Ի. դարի սկզբին, երբ Կ. Պօլսոյ յոյն պատրիարքական աթոռը բարձրացաւ Յովակիմ Գ. շատ անգամ միջնորդութիւններ եղան ստաւրիոտների պաշտպանութեան համար, բայց Արդիւլ-Համիդ Ա-ի թագաւորութեան ժամանակ խնդիրը բոլորովին անհետեանք մնաց։ Այդ ժաման լրագրներում ոչ միայն չէին գրում, այլ մինչև անգամ վախենում էին խօսել, նոյն խոկ պատրիարքարանում ահ ու գողի մէջ էին քննում այս հին խնդիրը։ Բայց ժամանակները փոխուեցին, Այժմ, երբ Տաճկաստանում նորից սահմանադրութիւն է հրատարակուել, երեան է եկել և այդ հարցը։ Այժմ տպուած են այն մի քանի թաքրիրները, որոնցով Յովակիմ պատրիարքը դիմել է թուրքաց երեքն Սուլթան Արդիւլ Համիդին և թուրքաց նախարարներին 1806—8 թ. ստաւրիոտների համար միջնորդութիւններ անելով։ Այս թաքրիրները այժմ ուղարկուած են թուրքաց կառավարութեանը և եւրոպական պիտութիւնների Կ. Պօլսում գտնւող ներկայացուցիչներին, խնդրելով նորից նկատութեան առնել հին գործը և վճռել այն՝ խղճի ազատութեան յայտարարուած սկզբունքի համեմատ։ Դոկումենտների մէջ կայ գործի համար հետաքրքիր նիւթ։ Յայտնւում է, որ Կ. դարում էլ Տաճկաստանի քրիոտնեանների դրութիւնը շատ ծանր է, չը նայելով պետական ամբողջ մի կարգ ազատամիտ կարգադրութիւններին, որ խղճի ազատութիւն էին յայտարարում։ Քրիստոնեայ ստաւրիոտներին, երբ նրանք ցանկանում էին քրիստոնէութիւն դաւանել, բռնի պահում էի մահմետականութեան մէջ, և զինւորներ էին առնում՝ մինչդեռ քրիստոնեանները ազատ էին զինւորագրութիւնից։ Քրիստոնեայ գիւղաւագներին աքսորում ու բանտարկում էին, եպիսկոպոսի փոխանորդին բանտարկում էին, պատիժ էին սպառնում քրիստոնեարին, եթէ նրանք համարձակուեն դիմել պատրիարքարանին բողոքելու թուրք վարչութեան ապօրինութիւն գէմ

Ալն ինչպէս երեռւմ է, թուրքաց կառավարութիւնը քաջալերում էր տեղական իշխանութիւններին, որովհետեւ Աղ-դազի կայմակամ էդիմ-բէյը, որ յայտնի էր իւր մոլեռանդութեամբ դէպի քրիստոնեաները, աւելի բարձր պաշտօն ստացաւ։ Կ. Պօլսոյ թուրքաց կառավարութեան պարտին է տալ ստաւրիօտներին խղճի ազատութիւն, իսկ երոպական դիպլոմատները պարտաւոր են պատրիարքարանին աջակցութիւն ցոյց տալ արդար գործը պաշտպանելով։

— Թուրքիայի քրիստոնեաների միւս գժբաղդութիւնն էլ այն է, որ նրանց բռնի մահմետական են դարձնում։ Սահմանադրութիւն մտցնելուց յետոյ է շարունակւում է քրիստոնեաների մահմետականացումը նախկին կամայականութեամբ, ոտնհար անելով մարդկային տարրական իրաւունքները։ Այս բանը հաստատում են մի շարք պաշտօնական ապացոյցներ, որ Յովակիմ պատրիարքը ներկայացրել է Բարձրագոյն Դրանը և երոպական դեսպաններին խնդրելով ուշագրութիւն դարձնել այս յայտնի չարիքի վերայ և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել այդ չարիքը բոլորպին բառնալու համար։ Ապացոյցներն ասում են որ մահմետականացումն կատարւում է յայտնապէս, օրը ցերեկով, թուրքաց իշխանութիւնների աչքի առաջ անչափահասների վերաբերութեամբ առաւելապէս՝ աղջիկների, շուտափոյթ կատարելով բոլոր յատկացեալ արարողութիւնները. այնպէս որ, ծնողները, նոյն իսկ միտրապօլիտները զրկուած են լինում հնարաւորունից միջոցներ ձեռք առնել, քրիստոնեաների խղճի վերայ բռնութեան և կամայականութեան դէմ։

Պատրիարքարանը, ի մասնաւորի, խնդրում է Բարձր. Դոնից, որ արգելուի քրիստոնեայ պատանիներին և աղջիկներին բռնի մահմետականացնելը. իսկ բռնութիւն գործող յանցաւորները օրէնքով խիստ պատժուեն։ 21 տարեկանից առաջ, թէ պատանի և թէ աղջիկ, պէտք է իրաւունք չունենան կրօնափոխ լինելու։ Քրիստոնեաները,

որոնք ցանկանում են մահմետական դառնալ, չը պէտք է փակուեն մահմետականների տներում, ինչպէս յաճախ լինում է. այլ պէտք է ազատօրէն դիմեն պատշաճ իշխանութեան յայտնելով իրանց կրօնափոխութեան ցանկութիւնը և խոկոյն պէտք է ուղարկուեն պատրիարքարան կամ առաջնօրդարան, համոզելու համար, և այնտեղ պէտք է հրաւիրուեն կրօնափոխութիւն ցանկացողների ծնողները: Երբ համոզանքները զուր անցնեն, այն ժամանակ նրանք կարող են մահմետական դառնալ: 21 տարեկանից պակասների, որպէս անչափահասների, կրօնափոխութեան համար դիմումները անհետեանք պէտք է մնան: Քրիստոնեաների զաւակները ինչ հասակի և սեռի էլ լինեն, պէտք է մնան այն ծնողի մօտ, որ պահել է նախկին հաւատը և չը պէտք է տրուեն նրան, որ կրօնափոխ է եղել: Երբ երկու ծնողներն էլ կրօնափոխ են լինում նրանց զաւակները պատրիարքարանի կամ առաջնօրդարանի միջոցով յանձնում են նրանց մերձաւոր ազգականներին, եթէ այդպիսիք էլ չը կան, տեղաւորւում են ուղղափառների որբանոցներում: Ընդհանուրապէս բռնի մահմետականացումն ոչ միայն հակասումէ խղճի ազատութեան ոկզբունքին, որը հրատարակուած է Քուրքիայում, այլ և նուաստացնում է քրիստոնէութիւնը մահմետականութեան առաջ, որովհետեւ մահմեդականութիւնից քրիստոնէութեան անցնելը դատապարտում է խիստ պատժով, իսկ քրիստոնէութիւնից մահմետականութեան դառնալը քաջալերում է: Տիեզերական պատրիարքարանը յոյս ունի, որ եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները ցոյց կը տան նրան իրանց բարձր հովանաւորութիւնն ու արդարացի աջակցութիւնը:

— «Արարատ»-ի Ժ. ԺԱ. տետրից արդէն յայտնի է, որ Կ. Պօլսոյ յոյն տիեզերական պատրիարքը դիմել էր Բարձր, Դրան առաջարկելով՝ որ քրիստոնէայ զինւորները իրանց գաւանութեան մէջ ազատ լինին որ և է ճնշումից, ունենան ազօթատուն և քահանայ, կատարեն իրանց կրօնական պարտաւորութիւնները, ծառայեն իրանց բնագաւթիւնը:

ւառում և լին Այժմ «Բիւղանդիս»-ում այս առիթով կարգում ենք,

— Յունաց Ս. Պատրիարքը նոր թագրիբով մը պահանջած էր որ քրիստոնեաներէն առանձին վաշտեր կազմուին, իսկ հրէից ռարունապետն ալ պահանջած էր որ քրցիւ կրօնական պատուէրն յարգուի, և հրեայ զինուորներուն ուտելիք միսը ռարունիներ նշանակեն, կենդանիներն անոնք մորթեն, և հրեաներ պատրաստեն հրեայ զինուորներուն ուտելիքները: Ռարունապետն ասիկա բացարձակ պայման դրած էր, ըսելով որ քրցիւ կրօնական պատուէր է: Արդ, բոլոր նախարարներն ալ որոշեր են մերժել այս օրինաւոր պահանջումները, ոս սկզբունքով թէ երբ քրիստոնեաներէ առանձին վաշտեր կազմուին, բազմաթիւ անպատեհութիւններ կըծնին ոչ միայն զինուորական ծառայութեան տեսակէտով, այլ և ազգային պահանջումներու տեղի կը տրաբուի: Սահմանադրութիւնը կատարեալ և ամբողջական հաւասարութիւն կուտայ կայսրութեան ժողովուրդներուն, առանց կրօնի և ցեղի խարութեան, և զանոնք կը դնէ միակ հայրենի գրօշի մը ներքեւ: Դալով ռարունապետին պահանջման, նախարարներն այն եզրակացութեան յանդեր են, թէ անկարելի է զանիկա իրագործել: Աշխարհի ոչ մէկ բանակին մէջ, ուր հրեայ կայ, հրեայ խոհարաներու կողմէ կ'պատրաստուի կերակուրը: Վարչապետն այսպէս պիտի պատասխանէ Յունաց Ս. Պատրիարքին և Ռարունապետին:

— Անտիոքի պատրիարք երանելի Գրիգոր Դ.-ը շըրջաբերական թուղթ է գրել Կիլիկիայի թեմի քրիստոնեաներին յատկապէս յոյներին յորդուելով դէպի խաղաղ և հաշտ կեանք: Պատրիարքը յայտնում է, որ արևելեան անկախ եկեղեցիների մէջ կայացել է համաձայնութիւն, որ բարեյածող հետեւանք է խոստանում Սիրիայի եկեղեցական հասարակական կեանքի համար: Ի մասնաւորի այժմ հոգս է անում կիլիկիայի թափուր թեմերում արժանաւոր եպիսկոպոս կարգել, որ կարողանար հաշտեցնել տե-

զական արար և յոյն ազգաբնակութեան մասերին, բաւարարութիւն տալով նրանց պահանջներին։ Ընդհանրապէս կիլիկիայի թեմի կարիքները պէտք է բաւարարուեն ըստ կարելւոյն և այն՝ կարճ ժամանակում։

— Յունաստանի եկեղեցական գործերի նախարար պ. Զայիմին եկեղեցական և վանական գանձարաններ հաստատելու մասին օրինագիծ էր ներկայացրել պարլամենտին։ Այս օրինագիծը վաղուց անտի գոյութիւն ունէր։ գանձարանների անհրաժեշտութիւնը խոստովանում էին յունական պետութեան թէ աշխարհական և թէ հոգեռորական վարչութիւնները։ Այնպէս որ գործի գլուխ գալը միայն ուրախութեամբ կողջունուէր։ և Յունաստանում կառավարութիւնը վերջապէս վճռել է հաստատել ընդհանուր եկեղեցական գանձարան, որի կարիքը վաղուց զգում էին ամենքը։ Գանձարանի նպատակն է ոսճիկ տալ յունական թագաւորութեան մէջ գտնող եպիսկոպոսներին և Սինօդի անդամներին։ կենսաթոշակ տալ եպիսկոպոսներին, և ոսճիկներ՝ հոգեռոր վարչութեան մէջ ծառայողներին, կրօնուսոյցներին, օխնօդական դիւանի ծառայողներին, օգնել հոգեռոր դպրոցներին, գրադարաններին և լի։

— Հետաքրքիր է յունական թագաւորութեան վերաբերեալ հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները դաւանանքների և լեզուների մասին։

Յունաստանում օրթոդոքս են 2,597,011 մարդ, կաթոլիկ 23,261, (առաւելապէս՝ կիլիկադեան կղզիներում), բողոքական՝ 1909, մահմետական՝ 3513 (գլխաւորապէս Լարիսասում) հրէայ՝ 6127 (որ ապրում են առաւելապէս կերկիրում) զանազան դաւանութեանց պատկանող՝ 127, Յունաստանի բնակիչները խօսում են յունարէն՝ 2,553,600 հոգի, որոնցից 1,287,489 այր 1,266,111 կին։ Ալբաներէն՝ 550946 (23,369 ը այր 27606 ը կին) առաւելապէս՝ Ատմիկայում, Բիովտիայում, կուցօվալախերէն՝ Թեսալիայում 10401 (5184 այր 5217 կին), Իտալերէն 6,752 (3,329 ը այր 3423-ը կին) Փրանսերէն, գերմաներէն, անգլիերէն և այլ լեզուներով։ 8094 (4257 ը այր և 3,837-ը կին)։